

« 23 » փետրվար 2026թ. No 878 - Ա

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԻԺՖԱՐՄ ԲԸ, 603105, Ք. ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈՂ, ՍԱԼԳԱՆՍԿԱՅԱ Փ., 7 ՄԱՍՆԱՇԵՆՔ 1- ՈՐԱԿԻ և ԲԱՑ ԹՈՂՆՄԱՆ ՀՍԿՈՂ, ՆԻԺՖԱՐՄ ԲԸ, 603105, Ք. ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈՂ, ՍԱԼԳԱՆՍԿԱՅԱ Փ., 7, ՌՈՒՍԱՍՏԱՆ- ԲԱԼՔ ԱՐՏԱԴՐՈՂ, ՓԱԹԵԹԱՎՈՐՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՆԻԺՖԱՐՄ ԲԸ, 603105, Ք. ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈՂ, ՍԱԼԳԱՆՍԿԱՅԱ Փ., 7, ՌՈՒՍԱՍՏԱՆ «ՔՈՆԴՐՕՔՍԻԴ ԱՐՏՐԱ ՔՈՆԴՐՈՒՏԻՆԻ ՍՈՒԼՖԱՏ (ՔՈՆԴՐՈՒՏԻՆ ՍՈՒԼՖԱՏ ՆԱՏՐԻՈՒՄ) ՔՍՈՒՔ ԱՐՏԱՔԻՆ ԿԻՐԱՌՄԱՆ 50ՄԳ/Գ; 30Գ ԱԼՅՈՒՄԻՆԵ ՊԱՐԿՈՒՃ ԿԱՄ ՊԼԱՍՏԻԿԵ ՊԱՐԿՈՒՃ» ԴԵՂԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ հետգրանցումային փոփոխությունների իրականացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1122-Ն որոշման 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված Ռուսաստանի Նիժնարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալզանսկայա փ., 7 մասնաշենք 1- որակի և բաց թողնման հսկող, Նիժնարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալզանսկայա փ., 7, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող արտադրության դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Նիժնարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալզանսկայա փ., 7, Ռուսաստան «Քոնդրոքսիդ Արտրա քոնդրոիտինի սուլֆատ (քոնդրոիտին սուլֆատ նատրիում) քսուք արտաքին կիրառման 50մգ/գ; 30գ այլումինե պարկուճ կամ պլաստիկ պարկուճ» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ ЛП-№003306-ГП-АМ առ 29.01.206թ. բացասական եզրակացության համաձայն դեղի հետգրանցումային փոփոխության հայտը մերժվում է հիմք ընդունելով ռեֆերենտ երկրի կողմից տրված բացասական եզրակացությունը (իրավական հիմք՝ 13.11.2025 N25-6-4341615/ИЗМ/Р/О):

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 2 հավելվածի 58-րդ կետի՝ դեղի հետգրանցումային փոփոխություններն մերժելու վերաբերյալ հրամանն ընդունվում է փորձագիտական եզրակացությունը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետը, N 2 հավելվածի 57 և 58-րդ կետերը, ինչպես նաև իրավական և վերոգրյալ փաստական հիմքերից ելնելով՝

#### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Ռուսաստանի Նիժնարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալզանսկայա փ., 7 մասնաշենք 1- որակի և բաց թողնման հսկող, Նիժնարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալզանսկայա փ., 7, Ռուսաստան- բալք արտադրող, փաթեթավորող արտադրության դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Նիժնարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալզանսկայա փ., 7, Ռուսաստան «Քոնդրոքսիդ Արտրա քոնդրոիտինի սուլֆատ (քոնդրոիտին սուլֆատ նատրիում) քսուք արտաքին կիրառման 50մգ/գ; 30գ այլումինե պարկուճ կամ պլաստիկ պարկուճ» դեղի հետգրանցումային փոփոխությունների գրանցումը Հայաստանի Հանրապետությունում: